


# Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Ս. Ստեփաննոս Նախավկայի և առաջին մարտիրոսի տոնը: Տոնի օրը Միածնաէջ Մայր Տաճարում Ս. Ստեփաննոս խորանի առջև մատուցվեց Ս. Պատարագ:

Ստեփաննոս Նախավկայի հիշատակության օրը Հայոց Եկեղեցում համարվում է նաև սարկավագների տոն:

Ս. Պատարագից հետո Վեհարանում Մայր Աթոռի տարբեր կառույցներում իրենց ծառայությունը բերող 27 սարկավագներին իր հայրական օրհնությունը բերեց ու շնորհավորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «*Ես հայցում եմ Երկնավորից, որպեսզի առատորեն հեղի ձեզ վրա Սուրբ Հոգու շնորհները, և ձեր հավատքով, կյանքով ու գործով դուք նմանվեք Ս. Ստեփաննոս Նախավկային, որ անվերապահորեն, առանց տատանվելու, առանց երկմտելու, առանց երկյուղելու կանգնեց քրիստոնեական հավատքի պաշտպանության համար և իր կյանքն ընծայաբերեց ի սեր Քրիստոսի:*

*Այսօր ժամանակները տարբեր են, բայց եկեղեցականի համար միշտ էլ հատկանշող է այդ ոգին՝ հանձնառության, զոհաբերության ոգին: Այսօր էլ տարբեր իրավիճակների մեջ գործող, ապրող մեր Եկեղեցին պետք ունի Ստեփաննոս սարկավագի նման նվիրյալ սպասավորների, ովքեր ամբողջական կերպով իրենց կյանքը, իրենց անձը կնվիրեն մեր Եկեղեցու ծառայության գործին*»,- ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով Եկեղեցու երիտասարդ սպասավորներին աչքի առջև միշտ ունենալ Ս. Ստեփաննոսի հավատքի ամրությունն ու արիասիրտ ոգին:

Նույն օրն Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց առաջնորդանիստ եկեղեցում չորս ուրարակիրներ, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, հընթացս Ս. Պատարագի ձեռնադրվեցին սարկավագ: